ԱՂՎԱՆՔԻ ՔԱՂԱՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա. Մ.

Դեռևս նախորդ դարի կեսերին Կ. Տրներն իրավացիորեն նկատել է, որ Աղվանքի քաղաքների պատմության ուսումնասիրության խնդիրը մնում է որպես պատմագիտության չլուծված հիմնահարցերից մեկը[1]: Դրանով զբաղվել են մի շարք հետազոտողներ (Ս. Երեմյան, Կ. Տրներ, Օ. Իսմիզադե, Ի. Բաբան, Դ. Խալիլով), որոնք սկզբնաղբյուրների, նաև հնագիտական նյութերի անբավարար առկայության պայմաններում ստիպված են եղել տալ Աղվանքի քաղաքների մոտավոր տեղադրությունը՝ հենվելով հիմնականում Պտղոմեոսի, Պլինիոս Ավագի ու «Աշխարհացոյց»-ում առկա տվյալների վրա:

Աղվանքի քաղաքների մասին առաջինն իր «Աշխարհագրական ուղեցույց» աշխատության մեջ հիշատակում է հույն աշխարհագրագետ Կլավդիոս Պտղոմեոսը: Նա գրում է, որ Աղվանքի քաղաքների թիվը հասնում է 29-ի, և անուն առ անուն թվարկում է դրանք[2]: Կարելի է ենթադրել, որ Աղվանքն ունեցել է քաղաքների բավականաչափ խիտ ցանց: Բայց, ըստ երևույթին, դրանց մի մասը քաղաքներ չեն եղել, թեկուզ այն ժամանակների հասկացությամբ, այլ պարզապես բնակավայրեր էին, որոնք ժամանակի ընթացքում դադարել են գոյություն ունենալուց: Ըստ էության, դա է այն հիմնական պատճառը, որ Պտղոմեոսի թվարկած 29 քաղաքներից 28-ը, բացառությամբ Կապաղակի, տեղադրությամբ գոնե մոտավորապես չեն համընկնում մյուս աղբյուրների նշած հայտնի քաղաքների հետ: Դրանք բոլորն էլ իրենց լատինական հնչողությամբ այնքան անճանաչելի են դարձել, որ ավելորդ է նույնիսկ փորձել դրանց համարժեքները գտնել: Չի օգնում նաև Վ. Լատիշևի և Կ. Գանի[3] թարգմանություններում առկա քաղաքների անվանումների համեմատությունը (խոսքը հունա-հռոմեական ակզբնաղբյուրների ռուսերեն թարգմանության մասին է): Հնագիտական պեղումներն էլ Աղվանքի տարածքում չեն հայտնաբերել այնպիսի բնակավայրերի մնացորդներ, որ հիշեցնեին Պտղոմեոսի հիշատակած այս կամ այն քաղաքը կամ նույնացվեին դրանց հետ: Այդ քաղաքների մեծ մասն Անանիա Շիրակացու օրոք արդեն գոյություն չուներ, և այդ պատճառով էլ հայ աշխարհագրագետն իր աշխատությունում դրանք չի հիշատակում, միայն թվարկում է իր ժամանակ գոյություն ունեցող քաղաքներն ու բնակավայրերը:

---

[1] **Тревер К.** *Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э. – VII в. н. э., М.-Л., 1959, с. 137.*

[2] *Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. В. Латышев (այսուհետև՝* **Латышев В.***), т. 1, СПб., 1894, с. 242-243.*

[3] **Ган К.** *Известия древних писателей греческих и римских о Кавказе (Сборник материалов для описания местностей и племен Кавказа), вып. 4, Тифлис, 1884, с. 169-171.*

Պտղոմեոսի հիշատակած աղվանական 29 քաղաքների տեղադրության խնդրով զբաղվող Կ. Տրները նույնպես հարցին մոտենում է ենթադրաբար՝ կարծելով, որ ժամանակի ընթացքում քաղաքները փոխում են իրենց անվանումները, առավել ևս այն դեպքում, երբ անցել է շուրջ երկու հազար տարի[4]: Պտղոմեոսը նշում է, որ Աղվանքի քաղաքները տեղակայված են եղել գետերի հովիտներում, և տալիս է դրանց աստիճանները (կոորդինատները): Կ. Տրները ևս փորձում է քաղաքների տեղադրությունը նշել գետերի հովիտներում. այսպես, Տելայբան կամ Տելաբիա քաղաքը նա դնում է Կուրի գետաբերանին, Ալբանա քաղաքը՝ Ալբանի գետի, Գետառան՝ Կուրի, իսկ Գելդան՝ Գեռա գետի մոտ[5]: Սակայն այս գետերի անվանումները, բացի Կուրից, նույնպես հստակ չեն, քանի որ այլ սկզբնաղբյուրներում ընդհանրապես գոյություն չունեն նման անվանումներով գետեր:

Մի շարք քաղաքներ նշված են Վրաստանի սահմանի մոտ: Դրանք են՝ Տազոդան, Բակրիան, Սանվան, Դեգլանան, Նիգուն[6]: Այնուհետև թվարկվում են մեկ տասնյակ բնակավայրեր, որոնք նշված են Ալբան գետի երկարությամբ, որը նույնպես սկիզբ է առնում Կովկասյան լեռնաշղթայից: Կ. Տրները, իրավամբ, սրանք համարում է գյուղեր[7]: Թվարկված քաղաքների տեղադրությունը նույնիսկ ենթադրաբար հնարավոր չէ տալ:

Սկզբնաղբյուրներն Աղվանքի քաղաքներից միայն Կապաղակի վերաբերյալ են որոշակի տեղեկություններ հաղորդում, այն էլ այս կամ այն իրադարձության հետ կապված, իսկ մյուս քաղաքների և բնակավայրերի մասին լռում են՝ բավարարվելով միայն դրանք թվարկելով:

Պտղոմեոսի աշխատության մեջ Կապաղակը հիշատակվում է՝ ղՈՉՈսՈ[8], իսկ Պլինիոսն անվանում է Cabalaca ձևով[9]: Փոքր-ինչ մանրամասն է «Աշխարհացոյց»-ի հաղորդումը. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս»[10]: Կապաղակը գտնվել է ներկայիս Ադրբեջանի Նուխիի շրջանից հարավ-արևելք, մոտավորապես50 կմ-ի վրա, այժմյան Կուտկաշենի շրջանում՝ Չուխուր - Կաբալա գյուղի շրջակայքի

---

[4] Тревер К., *նշվ. աշխ., էջ 137:*

[5] *Նույն տեղում, էջ 139:* Ս. Մուրավյովը Գելդան տեղադրում է այժմյան Գյոյլառ Դարի մոտ [տե՛ս Муравьев С. *Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия (Вестник древней истории, 1983, с. 140)].*

[6] Латышев В., *նշվ. աշխ., հ. 1, էջ 242:*

[7] Тревер К., *նշվ. աշխ., էջ 141:*

[8] Латышев В., *նշվ. աշխ., հ. 1, էջ 243:*

[9] *Նույն տեղում, հ. 2, էջ 181:*

[10] *«Աշխարհացոյց» Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց (այսու- հետև՝ «Աշխարհացոյց»), Վենետիկ, 1881, էջ 29:*

ավերակների տեղում[11]: Պտղոմեոսի քարտեզում Կապաղակը ներկայացված է հյուսիսային երկարության 47°-ում, իսկ արևմտյան լայնության՝ 80°-ում[12]: Անտիկ հեղինակների և «Աշխարհացոյց»-ի տվյալներից ելնելով՝ կարելի է ասել, որ Կապաղակը գտնվում է Ավթարանի հովտում: Անանիա Շիրակացին «Աշխարհացոյց»-ում Կապաղակը տեղադրել է Կովկասյան լեռների մոտակայքում՝ «ընդ որոյ մէջ գետն Սէբոջ»[13]: Պտղոմեոսի կազմած քարտեզում Կապաղակի աստիճանները լիովին հաստատում են այս տեղեկությունները: Կապաղակն ընդգրկում է ավելի քան 25 հա տարածություն[14]: Քաղաքի ավերակները գտնվում են լեռան վրա:

XIX դարավերջին և XX դարասկզբին Աղվանքի տարածքում սկսեցին կատարվել հնագիտական հետազոտություններ: Ուսումնասիրողները տարբեր կարծիքներ էին հայտնում (տե՛ս ստորև) Կապաղակի գտնվելու վայրի վերաբերյալ՝ փորձելով այն դուրս բերել Աղվանքի սահմաններից: Այսպես, արևելագետներ Ա. Կարաուլովը և Ե. Տոկայշվիլին քաղաքը «տեղադրում են» արևելյան Վրաստանում՝ Կախեթիում[15], իսկ մեկ այլ արևելագետ՝ Գ. Լեստրենջը, գրտնում է, որ Կապաղակ ամրոցը եղել Դերբենդի մոտակայքի լեռներում[16]: Այդ տեսակետի հերքումով հանդես եկավ Ա. Կրիմսկին[17]. Կապաղակի մասին գրելով հատուկ ուսումնասիրություն՝ նա այն կարծիքը հայտնեց, որ քաղաքը գտնվում էր պատմիչների նախանշած վայրում:

1926 թ., երբ լայն թափ ստացան քաղաքի հնագիտական հետազոտությունները[18], ուսումնասիրողների այն տեսակետները, թե Կապաղակը գտնվել է Աղվանքի սահմաններից դուրս, հերքվեցին[19]:

Կապաղակի արևմտյան կողմով հոսել է Կարա-չայ գետը, իսկ արևելքում՝ Դորլու-չայը: Հարավային մասում այդ գետերը ընթացել են նույն հունով և թափվել Դուրիան-չայ (Սեբոջ) գետը: Գետերի առկայությունը քաղաքի մոտ նպաստում էր, որ անհրաժեշտության դեպքում Կապաղակի շուրջը փորված խրամները լցվեին ջրով, և քաղաքն անմատչելի դառնար:

Հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ Կապաղակն ունեցել է պաշտպանական հզոր պարիսպներ ու աշտարակներ և երկու դարպաս: Պահպանվել

---

[11] **Исми-Заде О.** *Кабала – столица древней Кавказской Албании (Вопросы истории Кавказской Албании), Баку, 1962, с. 54.*

[12] **Латышев В.,** *նշվ. աշխ., հ. 1, էջ 243:*

[13] *Աշխարհացոյց, էջ 29:*

[14] **Алиев И., Гадиров Ф.** *Кабала – Cabala, Баку, 1985, с. 23.*

[15] **Караулов Н.** *Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXIX, Тифлис, 1901, с. 17).* **Токайшвили Е.** *Сборник попечителя Кавказского учебного округа, вып. XXII, отд. 1, 1897, с. 64.*

[16] **Lestrenge G.** *The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1905, p. 181.*

[17] **Крымский А.** *Страницы из истории северного или Кавказского Азербайджана (классической Албании). Сборник в честь С. Ф. Ольденбурга, Л., 1934, с. 289-305.*

[18] **Исми-Заде О.,** *նշվ. աշխ., էջ 65:*

[19] *Նույն տեղում, էջ 54-73:*

են հարավային դարպասի՝ 9-10 մ բարձրությամբ և 15 մ լայնությամբ աշտարակները: Ամրոցի պատերի հաստությունը կազմել է 3-4 մ[20]: Պարիսպների տակ պահպանվել են խորը փորվածքներ՝ անցուղիների տեսքով, որոնք քաղաքի պաշարման դեպքում արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու միակ միջոցն էին:

Քաղաքում հայտնաբերվել է ջրատար համակարգ, որն ունեցել է ընդարձակ ցանց. ջրատարի խողովակները տարածված են եղել ողջ քաղաքով՝ բնակիչներին մատակարարելով խմելու ջուր: Ինչպես նշում է Օ. Իսմիզադեն, նման ջրատարներ հայտնաբերվել են Աղվանքի մյուս քաղաքներում ևս[21], բայց թե որ քաղաքներում, չի մանրամասնում:

Կապաղակի տարածքում հայտնաբերված մետաղյա առարկաները սահմանափակ են. դրանց մեջ եղած ամենահին զենքերը հետազոտողները թվագրում են XIV դարով, երբ Լենկ-Թեմուրը գրավեց քաղաքը[22]: Քաղաքի ավերակներից հայտնաբերվել են նաև նյութական մշակույթի մնացորդներ՝ թասեր, գավեր, խեցեգործական արտադրանքի մնացորդներ[23]: Պետության կազմավորմանը զուգընթաց՝ քաղաքում սկսեց գործել դրամահատարանը: Նախահելլենիստական շրջանում՝ մ.թ.ա. VI-IV դդ., աղվանական ցեղերի մեջ թույլ էր զարգացած դրամական շրջանառությունը, ապրանքափոխանակությունը կատարվում էր բնամթերային և թանկարժեք մետաղների կշռային ձուլվածքներով: Աղվանքում դրամական համակարգը զարգացում ապրեց հելլենիստական ժամանակաշրջանում, մասնավորապես, մ.թ.ա. III-II դդ.: Դրա վկայությունը 1966 թ. Կապաղակից հարավ-արևմուտք 2 կմ հեռավորության վրա գտնված գանձն է[24]. 593 արծաթյա դրամներից 440-ը սելևկյան են[25]: Այստեղ չկար աղվանական և ոչ մի դրամ, քանի որ այդ ժամանակ Աղվանքում դեռևս գոյություն չուներ պետական միավորում, ինչպես նաև դրամահատարան: Պետության կազմավորմանը զուգընթաց՝ մ.թ.ա. I դ. երրորդ քառորդից սկսվեց նաև աղվանական դրամների թողարկումը, քանի որ դրսից բերված դրամները չէին կարող բավարարել շուկայի պահանջները: Դրամահատարանը պետք է գտնվեր Աղվանքի առևտրական ու վարչական կենտրոններից մեկում: Այդպիսի կենտրոն էր Կապաղակը: Տարբեր ժամանակներում այստեղ հայտնաբերվել են պարթևական, սասանյան, մակեդոնական, սելևկյան,

---

[20] Նույն տեղում, էջ 62:

[21] Նույն տեղում, էջ 70:

[22] Նույն տեղում, էջ 68:

[23] **Бабаев И.** *Античная черепица Кавказской Албании (Советская археология, М., 1974, N 2, с. 49).*

[24] **Бабаев И., Казиев С.** *Кабалинский клад монет эллинистической эпохи (Нумизматика и этнография, М., 1971, N IX, с. 16).*

[25] Նույն տեղում:

հռոմեական և, վերջապես, աղվանական բազմաթիվ դրամներ[26]: Կապաղակում հայտնաբերված աղվանական դրամները նման էին դեռ այն ժամանակ նշանավոր և լայն տարածում գտած՝ Ալեքսանդր Մակեդոնացու դրամներին ու մանրադրամներին, սակայն դրանց զիջում էին որակական առումով[27]: Դեռևս անհայտ պատճառներով՝ մ.թ.ա. I դ. կեսին Կապաղակի դրամահատարանում տեղական դրամների թողարկումը դադարեցվում է[28], և Աղվանքի դրամական համակարգում նորից սկսում են մեծ դեր խաղալ պարթևական, հռոմեական, մի փոքր ուշ՝ սասանյան դրամները:

Կապաղակում և նրա շրջակայքում կատարված հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Աղվանքի գլխավոր քաղաքը եղել է Այսրկովկասի նշանավոր վարչական, առևտրական ու մշակութային կենտրոններից մեկը, որը մեծ դեր է խաղացել Աղվանքի քաղաքական կյանքում՝ շնորհիվ իր զբաղեցրած դիրքի: Հին առևտրական ճանապարհներն Աղվանքի մայրաքաղաքը կապել են ուրիշ երկրների հետ: Մինչև օրս պահպանվել են հին և միջնադարյան ճանապարհների հետքերը, որոնց շնորհիվ աղվանները տնտեսական ու մշակութային սերտ կապի մեջ էին հարևան երկրների՝ Մեծ Հայքի և միջերկրածովյան պետությունների հետ[29]: Մ.թ.ա. I դ. սկզբին դառնալով աղվանական նորաստեղծ պետության գլխավոր քաղաքը[30], ինչպես նաև Արշակունի թագավորների նստավայրը՝ Կապաղակն իր դերը պահպանեց մինչև մ.թ. V դ. կեսը, ոչ թե մ.թ. I դարը[31]: 461 թ. Աղվանքում թագավորական իշխանության վերացումից հետո պարսից վարչական մարմինները կենտրոնացան Չորում, ապա Պարտավում, և Կապաղակն աստիճանաբար կորցրեց իր առաջատար նշանակությունը:

Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Կապաղակը՝ որպես բնակավայր գոյատևել է նաև հետագա դարերում: Թեպետ Լենկ-Թեմուրի 1387 թ. արշավանքի հետևանքով քաղաքն ավերվեց, սակայն բնակչության մեծ մասն այնտեղից չհեռացավ: Երբ 1500 թ. Իրանի ապագա շահ Իսմայիլը պաշարեց Կապաղակը, նրան հաջողվեց քաղաքը գրավել միայն մեծաթիվ զոհերի գնով[32]: Օ. Իսմի-զադեն նշում է, որ Կապաղակի բնակչությունը Չուխուր-Կաբալա գյուղ է տեղափոխվել XIX դ. երկրորդ կեսին[33]: Սակայն, կարծում ենք՝ Աղվանքի տնտեսական ու մշակութային երբեմնի նշանավոր կենտրոն Կապաղակը չէր կարող գոյատևել մինչև XIX դ.

---

[26] Նույն տեղում, էջ 16, 18, 21:

[27] Նույն տեղում, էջ 21:

[28] Նույն տեղում:

[29] **Исми-Заде О.**, նշվ. աշխ., էջ 55:

[30] Աղբյուրներն ուղղակի չեն նշում, որ Կապաղակը եղել է Աղվանքի մայրաքաղաք, դրանք միայն այն անվանում են երկրի կարևոր քաղաք:

[31] **Крымский А.**, նշվ. աշխ., էջ 289-290:

[32] **Исми-Заде О.**, նշվ. աշխ., էջ 72:

[33] Նույն տեղում:

երկրորդ կեսը, այլ վերջնականապես լքվել և ավերակների է վերածվել Իսմայիլի աշավանքի հետևանքով:

Աղվանքի գլխավոր քաղաքի՝ Կապաղակի ինչպես հին, այնպես էլ միջնադարյան ամբողջական պատմությունը լուսաբանելու համար անհրաժեշտ է կատարել հնագիտական լրացուցիչ պեղումներ քաղաքի տարածքում և շրջակայքում: Կարծում ենք՝ ձեռք բերված նոր փաստերը լույս կսփռեն աղվանական մայրաքաղաքի կյանքի այն կողմերի վրա, որոնք նյութերի անբավարարության պատճառով մնացել են անհայտ:

Աղվանքի նշանավոր քաղաքներից է Շամախին, որը Պտղոմեոսը հիշատակում է որպես Մամեխիա[34]: Ադրբեջանցի հեղինակներ Դ. Խալիլովն ու Ի. Բաբանը կարծում են, որ Շամախիի ծաղկման ժամանակաշրջանը եղել է մ. թ. ա. II հազարամյակը, երբ այն դարձավ Աղվանքի մշակութային ու տնտեսական կենտրոնը[35]: Կարծում ենք, որ մ.թ.ա. II հազարամյակում Աղվանքի տարածքում քաղաքներ ընդհանրապես գոյություն չեն ունեցել, իսկ Շամախի քաղաքի ծաղկման ժամանակահատվածի սկիզբը պետք է համարել մ.թ.ա. I դարը: Անտիկ Շամախիի տարածքից հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերվել են միայն աղյուսից կառուցված պատերի մնացորդներ[36]: Հին Շամախին գտնվում է ներկայիս Շամախի քաղաքից 1.5 կմ դեպի հյուսիս արևմուտք[37]:

Դ. Խալիլովը և Ի. Բաբանը կարծում են, թե Աղվանքի տարածքում անտիկ շրջանի քաղաքատիպ ավան է նաև Մինգեչաուրը[38]: Սակայն թե՛ Պտղոմեոսը և թե՛ Անանիա Շիրակացին չեն հիշատակում ոչ մի այդպիսի քաղաքատիպ ավան:

Ադրբեջանցի հեղինակներն Աղվանքի կազմում նշում են Ուրցեկ քաղաքը և ասում, որ իբր թե այդ մասին վկայում է Մովսես Կաղանկատվացին՝ այն հիշատակելով որպես հոների թագավորության մայրաքաղաք՝ «Վարաչան» անունով[39]: Այո՛, Մովսես Կաղանկատվացին իր աշխատության մեջ մի քանի անգամ հիշատակում է Վարաչան[40], որը գտնվում է ներկայիս Բույնակսկ քաղաքի մերձակա Կոսֆիր-Կումուխ վայրում[41]: Վերջինը նույնիսկ հեռավոր կապ չունի թե՛ Ուրցեկ քաղաքի, թե՛ Աղվանքի հետ, քանզի գտնվում է Դաղստանի տարածքում:

Վերոնշյալ ադրբեջանցի հեղինակներն այսօրվա Ադրբեջանի տարածքում

---

[34] Латышев В., *նշվ. աշխ., հ. 1, էջ 243: Մամեխիան Ս. Մուրավյովը տեղադրում է Ալջիգանչայ գետից ոչ շատ հեռու (տե՛ս* Муравьев С., *նշվ. աշխ., էջ 137):*

[35] Халилов Дж., Бабаев И. *О городах древней Кавказской Албании (Советская археология, М., 1974, N 4, с. 104).*

[36] *Նույն տեղում, էջ 103:*

[37] Ашурбейли С. *Государство Ширваншахов (VI-XVI вв.), Баку, 1983, с. 39-40.*

[38] Халилов Дж., Бабаев И., *նշվ. աշխ., էջ 105:*

[39] *Նույն տեղում, էջ 106:*

[40] Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Ադուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Ե., 1983, էջ 239, 255, 260:*

[41] Մովսես Կաղանկատվացի, *Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Ե., 1969, էջ 287, ծան. 218:*

հայտնաբերված մեծ ու փոքր բնակավայրերն անվերապահորեն հայտարարում են աղվանական: Սակայն քաջ հայտնի է, որ Աղվանքը զբաղեցրել է ներկայիս Ադրբեջանի մի մասը, իսկ մնացած տարածքում բնակվել են բազմաթիվ ժողովուրդներ, և այդ քաղաքների ու բնակավայրերի մեծագույն մասը պատկանում է նրանց:

Նկատենք, որ Կամբեճան գավառում «Աշխարհացոյց»-ի հեղինակը հիշատակում է Վարազմանավառ բերդը՝ Կուդրաթ գյուղաքաղաքով. «Քամբէճան առ Կուրաւ. եւ ըստ հարաւոյ նորա բերդն Վարազմանաւառ, հանդերձ Կուդրաթ գեղաքաղաքաւ...»[42]: Սա նշանակում է, որ բերդը գտնվում է կամ գյուղաքաղաքում, կամ նրա շրջակայքում: Ս. Երեմյանը, սակայն, իր կազմած քարտեզում Կուդրաթ գյուղաքաղաքը նշում է Կամբեճանի, իսկ Վարազմանավառ բերդը՝ Վիրքի[43] կազմում: Առաջին հայացքից թվում է, թե կա- տարվածը տպագրական սխալ է: Սակայն նույն պատկերն է նաև Ս. Երեմյանի կազմած այլ քարտեզներում[44], որտեղ այդ ամրոցը «տրված է» Վրաստանին: Եթե բերդը պատկաներ վերջինիս, ապա Անանիա Շիրակացին այն կհիշատակեր Վիրքի և ոչ թե Աղվանքի սահմաններում:

Աղվանքի հաջորդ քաղաքը Գվգավն է՝ Ալազան գետի մոտ: Ըստ երևույթին, քաղաքի կառուցման վայրը պատահական չի ընտրվել՝ «Գրուգաւ քաղաք, առ Աղուան գետով»[45], քանի որ գետի առկայությունը նպաստելու էր քաղաքի հետագա զարգացմանը: Գվգավից ոչ հեռու հոսել է նաև Կուրը: Բ. Հարությունյանը քաղաքը «տեղադրել է» Կամբեճանի ու Գետառուի սահմանում՝ Աղուան և Կուր գետերի միախառնման մոտակայքում[46]:

Ս. Երեմյանը Շաքե գավառի կազմում հիշատակում է Գիշ բնակավայրը, որը գտնվում է ներկայիս Նուխիից հյուսիս[47]: «Աշխարհացոյց»-ում, սակայն, այդպիսի բնակավայրի հիշատակության մենք չենք հանդիպել: Կարծում ենք՝ Գիշ անունով բնակավայրը հանդես է եկել ավելի ուշ շրջանում:

Մյուս նշանավոր բնակավայրը Քաղաբերդ ամրոցն է Քաղաց դաշտ գավառում: Ներկայումս այն կոչվում է Աղդաշ[48]: Ամրոցը Սեբոջ գետի ափին էր գտնվում և ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, քանի որ Քաղաց դաշտից հյուսիս-արևելքում էին Ոստան - ի - Մարզպան գավառի տարածքը և Քաղաբերդ ամրոցը, որն, ամենայն հավանականությամբ, նախատեսված էր պաշտպանելու դրա հեռավոր մատույցները:

---

[42] *Աշխարհացոյց, էջ 29:*

[43] **Երեմյան Ս.,** *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Ե., 1963, էջ 82, և կից քարտեզը, Բ 6:*

[44] **Երեմյան Ս.,** *Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Ե., 1984:*

[45] *Աշխարհացոյց, էջ 29:*

[46] **Հարությունյան Բ.,** *Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Ե., 2001:*

[47] **Երեմյան Ս.,** *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 48 և կից քարտեզը, Բ 7:*

[48] *Նույն տեղում, էջ 89:*

Մովսես Կաղանկատվացին Ճիղբքում[49] *հիշատակում է Ցրի բերդաքաղաքը: Բ. Հարությունյանը և Ա. Հակոբյանը Ցրին «տեղադրում են» Շամախիի տեղում կամ էլ նրա մերձակայքում*[50]*:*

Սրանք են Աղվանքի քաղաքների ու բնակավայրերի մասին հաղորդումները:

ГОРОДА АГВАНКА ПО ГРЕКО-РИМСКИМ И АРМЯНСКИМ ПЕРВОИСТОЧНИКАМ

ВАРДАНЯН А. М.

Резюме

Задача изучения истории городов Агванка остается одной из нерешенных проблем историографии. Исследователи, занимающиеся этой проблемой, в связи с малочисленностью первоисточников, а также археологических материалов дают приблизительное историко-географическое описание городов Агванка. В первоисточниках содержатся конкретные сведения лишь о Капагаке. Известными городами Агванка были Шамахи, Мингечаур, Гвгав, Кахакаберд (город-крепость) и в период марзпанства – город-крепость Цри.

[49] *Ճիղբքը սկզբնական շրջանում չի եղել Աղվանքի կազմում, հետագայում, մարզպանության կազմավորման հետևանքով, Ճիղբքը Աղվանից մարզպանության մաս կազմեց:*

[50] *Տե՛ս* **Հարությունյան Բ.,** *Լփինքի տեղադրության հարցի շուրջը (Բանբեր Երևանի համալսարանի), 1981, N 1, էջ 122-123,* **Акопян А.** *"Албания-Алуанк" в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, с. 88.*